# ԿԱՐԾԻՔ ՆԱՐԵԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ «ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ» ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ գրականագիտությունը բազմիցս անդրադարձել է Եղիշե Չարենցի ստեղծագործությանը, սակայն Չարենցի բնագիրն այնքան հարուստ շերտեր ունի, որ անընդհատ նոր վերլուծությունների հնարավորություն տալիս է: Նարեկ Գագիկի Սուքիասյանի «Եղիշե Չարենցը և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» թեկնածուական ատենախոսությունը հենց այս միտումով պետք է հատկանշվեր: Ատենախոսը թերևս չի կարողացել է հաղթահարել նյութի բարդությունը, քանզի Չարենցի բազմաշերտ ստեղծագործական հանգույցներում քննել համաշխարհային գրականության զարգացումները, արդեն իսկ հարցադրման մեջ ենթադրում է ավելի լայն շրջանակներ և առավել ընդգրկուն գրական աշխարհագրություն:

Արդի գրականագիտությունն ազատագրվել է խորհրդային շրջանի մտածողության սահմանափակումներից և հրաշալի առիթ է, հատկապես երիտասարդ գիտնականի համար նորովի ու նոր հայացքով քննել հայ դասական գրականությունը: Նարեկ Սուքիասյանի սույն աշխատությունը եթե նման գործառնություն ունենար, անշուշտ, նոր խոսք կլիներ ժամանակակից հայ գրականագիտության մեջ: Մանավանդ, որ նման նախադեպ արդեն իսկ կա. խոսքս Սեյրան Գրիգորյանի «Պարույր Սևակը և համաշխարհային պոեզիանե ուսումնասիրության մասին է: Ատենախոսի թեման՝ ևս ընձեռում է նման ուսումնասիրության հնարավորությունը: Պետք է նշել, որ նման աշխատություններում կարևոր է, որպեսի Չարենցի գրական մտածողությունը լինի առաջնային պլանում, այնինչ սույն աշխատության մեջ տպավորություն է ստեղծվում, որ եվրոպական գրականությանն ուղղակիորեն անդրադարձ է կատարել Չարենցը և նրա ստեղծագործություններում ավելի գերակա է համաշխարհային արձագանքը քան դրա յուրացումն ու սինթեզը: Բացի այդ մի շարք համեմատություններ համաշխարհային գրականության հեղինակների հետ, ուղղակիորեն գրողների

բառօգտագործման նմանողությամբ ու բառերի, մտքերի ընդհանրությամբ են ներկայացված (էջ 32 Վեռլեն-Չարենց համեմատություն), այնինչ լավ կլիներ, որպեսզի ավելի խորքային ներկայացվեր կապը Չարենցի և եվրոպական գրականության միջև: Դարձյալ շեշտեմ՝ գրականության, ոչ թե այս կամ այն գրողի:

1925 թվականի Չարենցի եվրոպական շրջագայությունից հետո ավելի է սերտանում գրողի կապը եվրոպական և համաշխարհային մշակութային արժեքների հետ, որի ցայտուն արձագանքն է դառնում «Էպիքական Լուսաբաց» (1930) գիրքը: Բայց պետք է նշեմ, որ Նարեկ Սուքիասյանն իր աշխատանքը կուռ է կառուցել, չնայած վիճելի է երրորդ գլուխը, որտեղ մոդեռնիզմը ներկայացնում է իբրև առանձին ուղղություն, իսկ առաջին և երկրորդ գլուխներում արդեն իսկ անդրադարձել էր մոդեռնիստական ուղղություններից սիմվոլիզմին և ֆուտուրիզմին: Թերևս ճիշտ կլիներ մոդեռնիզմից սկսել և ներկայացնել մոդեռնիզմի տարբեր շրջաններում տարբեր ուղղությունների ու համաշխարհային պոետիկայի հետ կապերը:

Աշխատանքը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ատենախոսը տալիս է ուսումնասիրության ընդհանուր բնութագիրը, հիմնավորում է աշխատանքի արդիականությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, կիրառական նշանակությունը և այլն, ինչպես նաև առանձին առանձին անդրադառնում է յուրաքանչյուր գլխին: Հպանցիկ է խոսվում հարցի պատմության մասին, այնինչ չարենցագիության մեջ մեծ ու նշանակալի ձեռքբերումներ կան: Մասնավորապես ատենախոսի դիտանկյունից դուրս են մնացել Սեյրան Գրիգորյանի «Չարենցի բնագիրը ուսումնասիրությունները, Հակոբ Օշականի և այլ սփյուռքահայ քննադատների ուսումնասիրություններն ու հոդվածները:

Ատենախոսը աշխատանքի ներածության մեջ իբրև կիրառում է ***հեղափոխական ֆուտուրիզմ*** եզրույթը, որը թերևս վիճելի է: Հետագա

շարադրանքում, մասնավորապես երկրորդ գլխում, անդրադառնում է հեղափոխական ֆուտուրիզմին և ճիշտ զգուշավորությամբ, քանզի երկրորդ գլխում արդեն հեղափոխական ֆուտուրիզմը չի ներկայացվում որպես գրական ուղղություն, այլև մտածողության կերպ, որը թերևս ավելի ընդունելի է:

Առաջին գլխում՝ «Եղիշե Չարենցը և սիմվոլիզմըե վերնագրով, ատենախոսն առանձին ենթագլուխներով քննում է բանաստեղծի սիմվոլիստական աշխարհընկալումը, խոսքի պատկերավորման ներքին կառուցակարգը, մտածողության գեղարվեստական առանձնահատկությունները: Գրողի աշխարհայացքին վերաբերով գնահատություններում մասնավորապես վիճելի է ատենախոսի այն ելակետը, ըստ որի «Չարենցի համար հայտնագործություններ էին Էդգար Պոն, Շ. Բոդլերը, Ս. Մալարմեն և ուրիշներ, որոնց հետ անմիջական կապը Ե. Չարենցի վաղ գործերում նկատելի է («Երեք երգ տխրադալուկ աղջկանե)ե (էջ 23): Բանն այն է, որ Չարենցը անմիջապես շարունակում էր Տերյանի սիմվոլիզմի ավանդույթը և առավել չափով կապված էր ռուս սիմվոլիստների հետ, քան վերոնշյալ եվրոպական բանաստեղծների: Համեմատության համար բերենք Սիամանթոյի և Մեծարենցի սիմվոլիստական ընկալումները, որոնք ավելի մոտ էին եվրոպականին: Չարենցի ստեղծագործություններում մարդն ու բնությունը միասնական են, անբաժանելի, ինչի շուրջ քննություն գրեթե չի կատարվում: Ավելի շահեկան կլիներ, եթե ատենախոսը բուն նյութը քններ Կանտի, Շտայների, Հեգելի և այլ փիլիսոփաների տեսական մտքերի շաղախում: Այստեղ է աշխատանքի կարևորությունը և միևնույն ժամանակ բարդությունը, քանզի բարդ հանգույցներ են առաջացել ատենախոսի համար, սակայն, ցավոք, պետք է արձանագրել, որ ատենախոսը շրջանցել է համաշխարհային փիլիսոփայական դրույթներն ու դրանք դուրս թողել իր ուսումնասիրության ծիրից:

Երկրորդ գլխում՝ «Եղիշե Չարենցը և ֆուտուրիզմըե խորագրով, ատենախոսն առանձին ենթագլուխներով ներկայացնում է ֆուտուրիզմի տեսությունն ու չարենցյան բնագրում առկա նորի և ավանդականի համադրությունը: Սակայն մի կարևոր հանգամանք. Չարենցի անցումը սիմվոլիզմից ֆուտուրիզմ՝ հիմնավոր չի մեկնաբանվում, որը, կարծում եմ կարևոր հարցադրում է: Միայն հեղափոխությամբ

պայմանավորել ուղղությունից-ուղղություն չարենցյան անցումը, թերևս նույնն է, թե ոչինչ չասել: Արտաքին պայմանները՝ գրապայքար, թեժ մարտեր, քաոսային մթնոլորտ և այլն չեն կարող հիմնավոր պատճառ լինել գաղափարական անցում կատարելու համար: Կարևոր է ընկալել և ներկայացնել բուն գաղափարի գեներացիան, տեսական այն հարցադրումը, որից կառչում է բանաստեղծը: Ֆուտուրիզմի համար կարևոր էր հավատն առ լուսավոր ապագան, որը կոմունիզմի գաղափարաբանության հիմքում էր դրված նաև: Ահա այն հիմնական գայթակղությունը, որ չարենցին տանում է դեպի ֆուտուրիստական գրական ուղղություն:

Երրորդ գլխում՝ «Եղիշե Չարենցը և մոդեռնիզմը» վերնագրով, թերևս աշխատանքի ամենաարտառոց մասն է: Որքան էլ ատենախոսը փորձի առանձնացնել մոդեռնիզմի երկու տեսակներ, որոնցից մեկը՝ իր մեջ ներառում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գրական-մշակութային ուղղությունները, իսկ մյուսը՝ առանձին ուղղություն է, այնուամենայնիվ, այն համոզիչ չէ: Մոդեռնիզմը մտածողության ձև է և ոչ թե գրական կամ մշակույթային ուղղություն: Մոդեռնիզմի անվան տակ ներկայացվող Կաֆկան՝ էկզիստենցիալիստ է, Էլիոթն ու Լորկան՝ նորդասականներ (նեոկլասիկ), Էլյուարը՝ սյուրռեալիստ և այլն:

Աշխատանքում Ենթագլուխների հարցադրումները կարծես թե ընդունելի են, բայց սոսկ գլխի սահմաններում և ոչ աշխատանքի գլխավոր հարցադրման համապատկերում: Երբեմն ատենախոսը նկատում է Չարենցի և այս կամ այն համաշխարհային գրողի բնագրերի միջև նուրբ ընդհանրություններ, սակայն դրանք մեկնաբանել ու վերլուծել չի զորում, երբեմն էլ բառերի նույնական կրկնությունները տարբեր հեղինակների մոտ դիտարկվում են իբրև պատկերային համակարգի նմանություններ: Սա թերևս պարզունակ համեմատությունների առիթ է տալիս և նման կերպ կարելի է յուրաքանչյուր գրողի համեմատել յուրաքանչյուր գրողի հետ:

Մի քանի դիտարկումներ ևս:

Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը անդրադառնար նաև Չարենցի ժամանակի գրական ընթացքին՝ մամուլի ուսումնասիրման պարագծում: Ընդհանուր

առմամբ ժամանակի մամուլը քիչ է ուսումնասիրված, ինչի պատճառով սակավ են դարձել փաստական այն ակունքները, ուր ձևավորվել է գրողի աշխարհայացքը:

Հաջորդ դիտարկումն այն է, որ ատենախոսության մեջ անդրադարձը կատարվում է հիմնականում գրական ուղղությունների շուրջ, այնինչ Չարենցի գեղագիտական և փիլիսոփայական շեշտադրումները ստվերված են:

Կարելի էր խուսափել որոշ տեսաբանների մի քանի անհարկի մեջբերումներից, որոնք առկախ են թողնում ուսումնասիրողի ասելիքը:

Հաջորդ դիտարկումը կապված է գնահատանքին և բանավեճին: Ատենախոսը հաճախ չեզոք է մնում իր գնահատանքների մեջ, որը պայմանավորված է աշխատանքում բանավիճային հարցադրումների սակավությամբ: Լավ կլիներ որպեսզի 20-րդ դարասկզբի պոեզիայի շուրջ ծագած բանավեճերը որոշակիորեն իրենց արձագանքները գտնեին աշխատանքում:

Չարենց քնարերգությունը նշանակալի արժեք է որպես 20-րդ դարի իրողություն, և ունի գրական ամբողջություն: Ինչպես հասկանալի է վերը նշվածից, Նարեկ Սուքիասյանը, ունենալով մեկնաբանության իր ելակետը, տեսական համակարգվածության է ենթարկել և վերլուծել Չարենցի բնագիրն հարմարեցնելով իր ընկալումների շրջանակին, այնինչ հակառակը պետք է լիներ և ատենախոսը պիտի հստակ սահմանելով իր ուղղվածությունը, այն է՝ փիլիսոփայական հարցադրումներ: Ատենախոսի համար առաջնայինը գրականության արտաքին դրսևորումների հարցն է՝ անկախ նրանից՝ խոսքը վերաբերում է բանաստեղծական լեզվին, մետաֆորին, բառին, թե բանաստեղծական բովանդակությանը:

Ատենախոսը լավ չի պատկերացնում իր հիմնական հարցադրումը, և իր առաջ քաշած հարցադրումները, թեման սպառել չեն կարող. չկա անդրադարձ ներժանրային բազմազանությանը, տաղաչափության կանոններին, բանաստեղծության ներքին զարգացումներին, լեզվամտածողությունը և ամենակարևորը՝ ***գեղարվեստականությանը***, որոնց բացահայտումներն էլ պետք է լինեին ատենախոսի հիմնական խնդրադրումները: Ուստի, հստակ տարբերակելով գրականը ուղղությունները ատենախոսն անդրադառնում է հատկապես այն

բանաստեղծներին, որոնց բնագիրն առավելապես աչքի է ընկնում տվյալ գրական ուղղության սահմաններում: Ահա թե ինչու նաև Սուքիասյանի աշխատանքը, ամբողջականության ձգտելով, այնուամենայնիվ Չարենցի և համաշխարհային գրականության հետ առնչությունների ընդհանուր պատկերը չի տալիս, չնայած ատենախոսը տեսական հարցադրումների մեջ անդրադառնում է մի շարք բանաստեղծական տեսակների, սակայն հետագա գլուխներում դրանք մասնակիորեն են վերլուծության ենթարկվում:

Այսինքն, եթե նախնական հարցադրումը փոխվի և ասենք թե ձևակերպվի հետևյալ կերպ՝ «Ե. Չարենցի պոեզիան և 20-րդ դարասկզբի գրական ուղղությունները», աշխատանքն այս խորագրի ներքո ավելի ամբողջական կդառնա:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, չեմ կարող միջնորդել ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտական խորհրդին, Նարեկ Սուքիասյանին շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «Եղիշե Չարենցը և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» ատենախոսության համար:

Բանասիրական գիտությունների թեկնածու՝ Արմեն Ավանեսյան

18.04.2023 թ.